

## ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գրական լեզվի կանոնարկման հիմքում դրվում են մի քանի չափանիշներ: Կանոնարկման համար հիմք է ծառայում նախ և առաջ այն, ինչ համապատասխանում է լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին ու ընդհանուր միտումներին: Այլ չափանիշներ են՝ լեզվական ավանդույթը, նորմավորողի մասնագիտական կարողությունները, երևույթի տարածվածությունը և այլն: Սակայն դրանցից և ոչ մեկը չի ընդունվում անվերապահորեն: Օրինակ՝ լեզվական ավանդույթը և լեզվի կենդանի գործածությունը հաճախ գտնվում են հակասության մեջ. միշտ չէ, որ հինը, ավանդականը ընդունելի է: Դա հնի և նորի պայքար է, որ սովորաբար ավարտվում է նորի հաղթանակով:

Լեզվական կանոնը ձևավորվում է նշված բոլոր գործոնների համադրության արդյունքում: Սակայն անվիճելի է, որ հատուկ ուշադրության են արժանի լեզվական այն իրողությունները, որոնք ցուցաբերում են տարածվելու և ամրանալու միտում:

Մեր խոսքը այս դեպքում լեզվական երկու կարգի զարգացումների կամ փոփոխությունների մասին է. ա) տեղաշարժեր, որոնք պայմանավորված են գրական լեզվում գործող ընդհանուր օրինաչափություններով, բ) տեղաշարժեր, որոնք թեև պայմանավորված չեն գրական լեզվի համակարգով և ընդհանուր օրինաչափություններով, բայց նաև չեն հակասում դրանց<sup>1</sup>:

**Ուղղախոսությունը** տվյալ լեզվի համար հանրության կողմից ընդունված արտասանական նորմերի, այսինքն՝ ուղիղ և ճիշտ խոսելու կանոնների ամբողջությունն է: Հայերենի արտասանական կանոնները ձևավորվել են հայոց լեզվի զարգացման ամբողջ ընթացքում և ենթակա են փոփոխությունների պատմական զարգացման որոշակի հատվածում:

Վերը նշված նորմավորման չափանիշներից թերևս ոչ մեկը արտասանական համակարգում այնքան վճռորոշ դեր չի կատարում, որքան ուղղախոսական այս կամ այն երևույթի տարածվածությունը:

Հարցը այսօր կարևոր է այնքանով, որ բանավոր կամ հրապարակային խոսքը ձեռք է բերում զարգացման ու գործառնության լայն շրջանակներ. ավելացել են բանավոր խոսքին ներկայացվող պահանջները. ճիշտ և հստակ խոսելը ոչ միայն ընկալվում է որպես հարգանք սեփական լեզվի և մշակույթի նկատմամբ, այլև կարևորագույն պայման է խոսքը լսարանին հասկանալի դարձնելու, նրա ուշադրությունը գրավելու, հետևաբար նաև նրա վրա ներգործելու համար:

<sup>1</sup> Արտասանական համակարգում հնարավոր են նաև այլ կարգի փոփոխություններ. դրանք ոչ միայն կարող են պայմանավորված չլինել գործող օրինաչափություններով, այլև կարող են հակասել դրանց: Սա բացառապես վերաբերում է փոխառյալ բառերին (տե՛ս Թ. Պարազյուպյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974, էջեր 224-242):

Ենթադրվում է, որ լեզվի այս կարևոր բնագավառին առնչվող խնդիրները եղել են լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Համեմատաբար նոր ժամանակներում այդ խնդիրներին անդրադարձել են Մ. Աբեղյանը, Ա. Ղարիբյանը, Էդ. Աղայանը, Վ. Առաքելյանը, Գ. Ջահուկյանը, Մ. Ասատրյանը, Հ. Բարսեղյանը, Թ. Ղարազյուլյանը և ուրիշներ<sup>2</sup>: Հարցը պարբերաբար քննարկվել է նաև լեզվի տեսչությունում՝ համապատասխան որոշումներով: Ուղղախոսական նորմերը, ժամանակ առ ժամանակ նորացվելով, ամրագրվել են դպրոցական ու բուհական դասագրքերում:

Եվ ահա նշված գրականության մեջ արձանագրված կանոնների և կենդանի լեզվագործածության փաստերի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում լեզվի մեջ առաջացել են արտասանական զգալի փոփոխություններ, ձևավորվում են արտասանական նոր առանձնահատկություններ, որոնք մի շարք կետերում շեղվում են ընդունված ուղղախոսական նորմերից: Հասկանալի է, որ այդ շեղումներն առավել զգալի են վաղ շրջանում գործող կանոնների համեմատությամբ: Այսօր արդեն լուրջ քննարկումների առիթ չունեն, օրինակ, XX դարի 50-60-ականների ուղղախոսական նորմերի և արդի լեզվագործածության զգալի տարբերությունները: Դրանք մտորելու տեղիք կարող են տալ լեզվի զարգացման ընդհանուր միտումների տեսանկյունից: Առավել ուշագրավ են այն տարբերությունները, որոնք առկա են այսօր իսկ գործող ուղղախոսական նորմերի և լեզվի կենդանի գործածության միջև:

Եղած հակադրությունը ինքնին բնական և օրինաչափ է. բխում է լեզվի զարգացման ներքին օրինաչափություններից: Սակայն հարցի վերաբերյալ նորմավորողի վերաբերմունքը միշտ չէ, որ համարժեք է, այսինքն՝ բնական ու օրինաչափ: Ավանդական քերականության սահմանած ուղղախոսական որոշ նորմեր մեխանիկորեն փոխանցվում են դասագրքից դասագիրք, երբ նույն ժամանակ կենդանի գրական լեզվի տվյալները և լեզվի զարգացման ընդհանուր միտումները այլ փաստեր են արձանագրում:

Ուղղախոսությունն ինքնին ներառում է հարցերի ու հարցադրումների բավական մեծ շրջանակ: Այս դեպքում մենք նպատակ ենք ունեցել մեր կատարած գրավոր և բանավոր հարցումների արդյունքով ուշադրություն հրավիրելու լեզվի այս ոլորտում կատարվող տեղաշարժերի և զարգացման ընդհանուր ուղղությունների ու նկատվող փոփոխությունների վրա:

Տեղաշարժեր են նկատվում արտասանական համակարգի որոշակի ոլորտներում.

### **Չայնավորներ**

1. Արտասանական զգալի փոփոխություններ կան բառամիջում է (ե) ձայնավորի արտասանության հետ կապված: Այդ ձայնավորի համար բառամիջում որպես արտասանական նորմ նշվում է հետևյալը. «Բառասկզբում ե-ն բարդ և ածանցավոր բառերի մեջ բաղաձայնից առաջ կարդացվում է որպես պարզ է ձայնավոր»<sup>3</sup>: Ըստ այդմ՝ նման կազմություն ունեցող բառերը պետք է արտասանել

<sup>2</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1956, Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և ուղղախոսության ուղեցույց, Եր., 1957, Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական քառաբան, Եր., 1973, Թ. Ղարազյուլյան, նշվ. աշխ.: Առանձին հոդվածներով կամ դիտարկումներով խնդիրն անդրադարձել են Գ. Սևակը, Վ. Առաքելյանը, Մ. Ասատրյանը և ուրիշներ:

<sup>3</sup> Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու: Դասագիրք 5-րդ դասարանի համար, Եր., 1991, էջ 84, 86:

հետևյալ կերպ՝ վեր[ե]լք, ան[ե]րևակայելի, կ[ե]րգենք, ան[ե]նթակա և այլն: Ակնհայտ է, որ սահմանված կանոնը հավասարապես չի ներառում նշված բոլոր բառերի արդի արտասանության յուրահատկությունները, ուստի առիթ է տալիս լայն քննարկումների: Ընդհանուր եզրակացությունն այն է, որ «այս կարգի բառերի արտասանության մեջ կան զգալի թվով բացառություններ»<sup>4</sup>:

Կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ բացառությունները վերաբերում են կազմության որոշակի յուրահատկություններ ունեցող բառախմբերի:

Դրանք են.

ա) -Ան ժխտական նախածանց ունեցող բառերը. դրանց մի զգալի մասում է-ի փոխարեն արտասանվում է յէ, ինչպես՝ ան/հրկյուղ, ան/կամտաբեր, ան/հնթակա, ան/հրկբա, ան/հրևակայելի, ան/հռանդ և այլն:

բ) Կցական բարդություններ, որոնց բաղադրիչները իմաստային և կիրառական առավել անկախություն ունեն, ինչպես՝ քսան/հրկու, քսան/հրէք, հոր/հրբայր և այլն (բայց սա էլ օրինաչափություն չէ, քանի որ ունենք նաև այս կանոնից շեղումներ, ինչպես՝ ան/զական, ան/զակի, սև հրես, խտուն/հրամ և այլն):

գ) Այն թվականները, որոնց երկրորդ բաղադրիչը երկու կամ երեք է՝ քսաներեք, տասներեք, քառասուներկու, ութսուներեք և այլն: Ըստ կանոնի՝ ե-ն այս թվականներում պետք է արտասանվի է, բայց դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք մեծ մասամբ հնչվում են որպես յէ՝ քսան/հրէք, տասն[ը]/հրէք, քառասուն/հրկու, ութսուն/հրէք: Բացատրություններից մեկն այն է, որ տասներկու և տասներեք թվականների համար գործում է այն թվականների համաբանությունը, որոնցում, բաղաձայնների զուգորդությամբ պայմանավորված, հնչվում է ը՝ որպես առոգանական հենարան, ինչպես՝ տասն/հինգ>տասն/լէ]րեք, տասն/չ[ե]գ> տասն/լէ]րկու, իսկ երկու թվականով բաղադրություններում յէ արտասանությունը պայմանավորված է նաև երկու թվականի բարբառային արտասանությամբ (երկու) չնմանվելու հանգամանքով: Բացի այդ, ուժեղ է այդ բաղադրիչների անկախ գիտակցումը:

Ակնհայտ է, որ սահմանված կանոնը հայերենի ժամանակակից ուղղախոսության մեջ ամբողջությամբ չի գործում, և խնդիրը քննության կարիք ունի: Նորմավորողի խնդիրն է ոչ թե նշված դեպքերում արտասանական այս տեղաշարժերը համարել շեղումներ, այլ դրանք ընդունել որպես հայերենի ուղղախոսության մեջ ձևավորված արտասանական զուգահեռ կանոն:

Այլ կերպ ասած՝ կանոնական պետք է համարել հիշյալ բառերի և՛ է-ով, և՛ յէ-ով արտասանությունները, ինչպես՝ քսան[ե]րկու // քսան[լէ]րկու, քսան[ե]րեք // քսան[լէ]րեք, ան[ե]րկյուղ // ան[լէ]րկյուղ, հոր[ե]րբայր // հոր[լէ]րբայր, ան[ե]կամտաբեր // ան[լէ]կամտաբեր, ան[ե]նթակա // ան[լէ]նթակա և այլն:

2. Բառամիջում արտասանական յուրահատկություններ ունի նաև օ (ո) հնչյունը: Կանոնը սահմանում է, որ «Բառամիջում լսվում է վո և գրվում է օ տառը, եթե նա ձայնավորից հետո է»<sup>5</sup>, կամ՝ «Ո-ով սկսվող բառերը բաղադրությունների մեջ (ածանցման կամ բառաբարդման դեպքում) փոխելով իրենց դիրքը, չեն պահպանում վօ հնչյունը և հնչվում են օ»<sup>6</sup>: Նշված կազմության բառերի մի մասում, իհարկե, այս կանոնը գործում է, ինչպես՝ ան[օ]րոշ, տար[օ]րոշեւ, աներ[օ]րդի, բարձր[օ]րակ և այլն:

<sup>4</sup> Տե՛ս Թ. Ղարազյուլյան, նշվ. աշխ., էջ 90:

<sup>5</sup> Է. Աղայան, Հ. Բարսեղյան, նշված դասագիրքը, էջ 86:

<sup>6</sup> Ա. Մուքիսայան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 60:

Սակայն, մեր դիտարկումներով, կա բառերի մի մեծ խումբ, որ շեղվում է արտասանական նշված կանոնից: Այս կանոնով **անոխակալ, անորդի, անողնաշարավոր, անողջամիտ, անորոգայթ** և **ան-** ժխտական նախածանցով էլի մի շարք բառեր պետք է արտասանվեն **օ** ձայնավորով, ինչպես՝ **ան[օ]խակալ, ան[օ]րդի, ան[օ]ղնաշարավոր, ան[օ]ղջամիտ, ան[օ]րոգայթ** և այլն: Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ նշված բառերի կենդանի արտասանության մեջ **օ-ի** փոխարեն հնչվում է **վօ**, ինչպես՝ **ան[վօ]րոգայթ, ան[վօ]րդի, ան[վօ]խակալ, ան[վօ]ղնաշարավոր, ան[վօ]տնահարելի, ան[վօ]ղջամիտ** և այլն:

Այս և նման բառերում **օ(ո)-ի վօ** արտասանությունը, կարծում ենք, ոչ միայն պետք է համարել կանոնական, այլև հանձնարարելի տարբերակ, այսինքն՝ նախընտրելի է ոչ թե՛ **ան[օ]րոգայթ, ան[օ]խակալ, ան[օ]ղնաշարավոր, ան[օ]տնահարելի, ան[օ]ղջամիտ** արտասանությունը, որը հնչում է նաև խիստ արհեստական, այլ՝ **ան[վօ]րոգայթ, ան[վօ]խակալ, ան[վօ]ղնաշարավոր, ան[վօ]տնահարելի, ան[վօ]ղջամիտ**, որ անվերապահորեն գերիշխող է մտավոր դասի և գրական լեզվին տիրապետողների բանավոր խոսքում:

3. Ակնհայտ հակասություն կա գործող լեզվական կանոնի և կենդանի լեզվում իշխող արտասանական սկզբունքների միջև՝ կապված կ եղանակչին և չ ժխտականին հաջորդող **ե-ի** և **ո-ի** արտասանության հարցի հետ: Կանոնը պահանջում է կ եղանակչից և չ ժխտականից հետո **ե-ն** և **ո-ն** արտասանել է և **օ**, **օ-րինակ՝ կ[օ]րոշեն, չ[օ]րոտա, կ[օ]րսանք, կ[օ]զևորեն, կ[է]րկարացնենք, կ[է]րգի, կ[օ]չնչացնի, կ[է]նթաղենք** և այլն: Արտասանական այս կանոնը նոր ժամանակների համար սահմանում է Մ. Աբեղյանը. «Գրական լեզվի մեջ արտասանում ենք՝ **երգել, ողջունել, որոշել, բայց կը և չը** մասնիկներից հետո առանց **Յ** և **Վ** հնչյունների՝ **կողջունեն, կորոշվի, չողջունել, չորոշել, կերգի, չերգել...** Բայց կան նաև արտասանողներ ու նույնիսկ գրողներ՝ **կըողջունեն, կըյերգի, չըողջունի...** Գրական լեզվի մեջ սակայն այդ արտասանությունն ու գրությունն ընդունված չէ<sup>7</sup>: Հայերենի ուղղախոսության վերաբերյալ բոլոր աշխատանքներում ավանդաբար պաշտպանվում է այս տեսակետը:

Կատարված հարցումները ցույց են տալիս բոլորովին այլ պատկեր: Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսում անցկացված հարցման արդյունքներով՝ 35 ուսանողներից **չորոշեցին** և **կերկարացնի** բառերը **վօ-ով** և **յէ-ով** (այսինքն՝ **կ[ը-յէ]րկարացնի, չ[ըվօ]րոշեցին**) են արտասանել 34-ը, և հարցվածներից միայն մեկն է պահպանել արտասանական կանոնը՝ **կ[է]րկարացնի, չ[օ]րոշեցին**: Անորսալի բառը **վօ-ով** (**ան[վօ]րսալի**), այսինքն՝ կենդանի խոսակցական տարբերակով են արտասանել 35-ից 24-ը: 11-ը առաջնորդվել են գրական լեզվի կանոնով:

Արտասանական այս տարբերակը չի հակասում լեզվի զարգացման ներքին միտումներին: Ավելին՝ կ եղանակչի և չ ժխտականի դեպքում ըստ էության գործում է ընդհանուր օրինաչափությունը. այդ մասնիկներն արտասանվում են **ը** ձայնավորով, որից հետո կանոնական է բառամիջում **յէ** և **վօ** արտասանությունը՝ **կչ-վօ]րոշենք, չը/վօ]րոտաց, չը/վօ]րսանք** և այլն: Հիշենք նաև, որ հին ուղղագրությամբ **կը** և **չը** մասնիկները գրվել են դերբայական ձևերից առանձին՝ **կը որոշեն, չը ողջունեն, կը ողջունեն** և այլն:

Մասնագիտական գրականության մեջ սա նկատված իրողություն է: Այս առիթով ասվում է. «Նշված տիպի բառերը մեծ մասամբ **յէ-ով** և **վօ-ով** են արտասանվում նաև հրապարակային խոսքում, գրական լեզվին լիովին տիրապետող անձանց կողմից: Ըստ կանոնի՝ է և **օ** արտասանությունը պահպանվում է միայն ընթերցման ժամանակ, այն էլ, կարելի է ասել, հազվադեպ», և ապա՝ «Ամենայն

<sup>7</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 117:

վստահությամբ կարելի է ասել, որ ...այս կարգի արտասանությունը խոսակցական ոճում լիովին բացառվում է»<sup>8</sup>: Բերվում են վիճակագրական տվյալներ, ըստ որոնց՝ պատկերը գրեթե նույնն է եղել մոտ երեք տասնամյակ առաջ՝ 1970-ականներին. բանասիրական ֆակուլտետի 52 ուսանողներից և ոչ մեկը հիշյալ կազմությամբ բառերը չի արտասանել ըստ կանոնի, այսինքն՝ օ-ով և է-ով:

Սակայն նորմավորողի վերաբերմունքի մեջ ուշադրության է արժանի մեկ այլ հանգամանք: Թեև իր իսկ դիտարկումների արդյունքները անվերապահորեն խոսում են կենդանի խոսակցական լեզվում տարածված և գրական լեզվում լայն գործածություն ստացած արտասանական իրողության մասին, որը, ինչպես նկատեցինք, բնավ չի հակասում լեզվի զարգացման օրինաչափություններին, բայց նա, չգիտես ինչու, հակված է պաշտպանելու լեզվական կանոնը, որ, մեղմ ասած, հակասության մեջ է լեզվագործածության հետ: Եվ այսքանից հետո մասնագետի եզրակացությունը այն է, որ նշված բառերի վօ-ով և յէ-ով արտասանությունը պետք է ընդամենը համարել արտասանական տարբերակ խոսակցական ոճում, մյուսը վերապահել գրական բարձր ոճերին<sup>9</sup>: Ուրիշ խոսքով, առաջարկվում է նշված բառերի գրական արտասանության մեջ պահպանել լեզվական կանոնը՝ կ[օ]րակագրկեն, կ[օ]րոճա, կ[օ]րոտա, չ[օ]րոնե, չ[օ]րակի, չ[է]րկարացնեն և այլն: Այս կանոնը գործում է նաև այսօր:

Մինչդեռ այսօր ընդունելի պետք է համարել ճիշտ հակառակ եզրակացությունը. բառամիջում կը և չը մասնիկներից առաջ այդ ե և ո տառերի յէ և վօ արտասանությունը ամբազրել որպես կանոն, իսկ մյուս՝ իբրև թե գրքային-գրական բարձր ոճերին հատուկ է-ով և օ-ով արտասանական տարբերակները համարել հնացած և ոչ հանձնարարելի: Մենք դրանով ոչ միայն հայ մարդուն, մեր մտավոր դասին և մանավանդ հեռուստահաղորդավարներին կազատենք նշված բառերը անբարեհունչ տարբերակով արտասանելու անհարկի ջանքերից, այլև, որ առավել կարևոր է, մի քայլ ևս կանենք ոչ թե արհեստականորեն իրարից հեռացնելու, այլ իրար մոտեցնելու մեր լեզվի գրական և խոսակցական տարբերակները:

### Չայնավորական զուգորդումներ

Այս տերմինը նկատի ունի այնպիսի կից ձայնավորների միացությունը, որոնք չեն արտասանվում մեկ վանկի մեջ, ինչպես՝ առ, առւ, իա, իե, իո, իու, եու, եա և այլն: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ հնարավոր է այդ զուգորդումների արտասանական իրացման երեք եղանակ.

1. Արտասանվում են առանց ձայնակապի՝ միանգամից, միամյակ, լիիրավ, ափեափ, այսուամենայնիվ, երկուական, ձիաուժ, ռադիոալիք, միկրոաշխարհ, հակաիրավական, ամենաիրական, կոալիցիա և այլն:

2. Ավանդաբար նշվել է, որ իա, իե, իո, իու, էու, եու, եա և նման ձայնական զուգորդումները մի շարք բառերում արտասանվում են յ ձայնակապի հավելումով<sup>10</sup>: Սա այսօր արձանագրվում է որպես արտասանական կանոն, այսինքն՝ պետք է արտասանել՝ անէ[յ]անա, Արփի[յ]ար, բազե[յ]ակիր, դասատու[յ]ի, գնե[յ]ին, է[յ]ակ, է[յ]ինք, է[յ]ություն, մարգարե[յ]ական, մի[յ]այն, մի[յ]ավորել, մի[յ]ասնություն, մի[յ]ություն, հղի[յ]անա, ձի[յ]եր, պի[յ]ես, Վի[յ]եննա, բոպե[յ]ի և այլն:

<sup>8</sup> Թ. Ղարազյուլյան, նշվ. աշխ., էջ 96:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 97-98:

<sup>10</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 119, Թ. Ղարազյուլյան, նշվ. աշխ., էջ 115, Է. Աղայան, Հ. Բարսեղյան, նշվ. դասագիրքը, էջ 90-93, Ա. Մուրիսյան, նշվ. աշխ., էջ 58-60:

3. Մի շարք ձայնավորական գուգորդումներ վերածվում են յ-ի. ձայնավորներից առաջ **ի** և **ե** տառերը որոշ դեպքերում փոխում են իրենց որակը, արտասանվում են որպես **յ** (նախորդ երկուսի համեմատությամբ այդ բառերի թիվը շատ չէ). **օվկիանոս, միլիոն, օրիորդ, Մարիամ, հեքիաթ, փասիան, պիոներ, ակադեմիա, հրեա, Անդրեաս, քրիստոնեական բառերը ըստ կանոնի պետք է արտասանել օվկյանոս, միլյոն, օրյորդ, Մարյամ, հեքյաթ, փասյան, պյոներ, ակադեմյա, հրյա, Անդրյաս, քրիստոնյական**<sup>11</sup>:

Առաջին խմբի բառերի արտասանության մեջ որևէ տեղաշարժ ավանդական արտասանությունից չի արձանագրվում, այսինքն՝ այսօր էլ արտասանում ենք՝ **միանգամից, միամյակ, լիիրավ, ափեափ, այսուամենայնիվ, երկուական, ձիաուժ** և այլն:

Եական տեղաշարժեր են նկատվում երկրորդ և երրորդ խմբի բառերի արտասանության մեջ:

Ըստ վիճակագրության՝ հայոց լեզվի և գրականության՝ գրավոր հարցման ենթարկված 15 ուսուցիչներից **միավորել** և **միայն** բառերը ոչ թե հստակ, այլ կիսահունչ յ-ով՝ **մի՛ավորել** և **մի՛այն** են արտասանում 14-ը, **գնեին** բառը **գնե՛ին** ձևով են արտասանում 11-ը, **էինք**–ը՝ **է՛ինք**՝ 9-ը, **ուրթյունը**՝ **է՛ւրթյուն**՝ 13-ը: Այսինքն՝ կենդանի լեզվագործածության մեջ ակնհայտ շեղում կա արձանագրված արտասանական կանոնից:

Այս խմբի բառերի համար, կարծում ենք, կանոնական համարելով արտասանական երկու տարբերակներն էլ՝ կիսահունչ յ-ով և յ-ի հավելումով, գրական լեզվում հանձնարարելի պետք է համարել առաջինը՝ կիսահունչ յ-ով արտասանությունը, ինչպես՝ **մի՛ավորել, հղի՛անալ, է՛ւրթյուն, ձի՛եր, է՛ակ, Վ՛իեննա, պի՛ես, է՛ինք, գնե՛ին, անէ՛անալ** և այլն:

Երրորդ խմբի բառերի արտասանության վերաբերյալ պետք է ասել հետևյալը. հայոց լեզվի ուսուցիչների շրջանում կատարված հարցման արդյունքներով **Անդրեասյան, Մարիամ** բառերը առանց ի>յ փոփոխության են արտասանում 15-ից 14-ը, այսինքն՝ արտասանական ընդունված կանոնը պահպանվում է 15-ից միայն մեկի արտասանության մեջ, որը հավանաբար անհատական արտասանական շեղում է: Այդ բառերը կենդանի լեզվի մեջ արտասանվում են կիսահունչ յ-ով, այնպես, ինչպես ըստ կանոնի արտասանվում են, օրինակ, **միանման, միամյակ** բառերը:

Մտավորապես նույնն է պատկերը ուսանողության շրջանում կատարված հարցման արդյունքներում: Կարծում ենք նաև, որ համոզիչ չէ այն հիմնավորումը, թե «փոխառյալ բառերում, որոնք հայոց լեզվում գործածվում են վաղուց ի վեր, երկինչյունների արտասանությունը ավելի որոշակի է. օրինակ՝ **Ֆեոդալ-Ֆյոդալ, մումիա-մումյա, օվկիանոս-օվկյանոս, միլիոն-միլյոն, ...**որոնցում հստակորեն յա, յօ է հնչվում, այնպես, ինչպես՝ **հեքիաթ, օրիորդ** բառերում»<sup>12</sup>:

Այդ և վերը նշված հայերեն բառերի՝ յ-ով արտասանությունը հնացած է, և դրանց համար հանձնարարելի պետք է համարվի կիսահունչ յ-ով արտասանությունը,

ոչ թե՝ **օվկյանոս, միլյոն, օրյորդ, Մարյամ, հեքյաթ, փասյան, պյոներ, ակադեմյա, հրյա, Անդրյաս, քրիստոնյական, ինչպես հանձնարարում է լեզվական կանոնը,**

<sup>11</sup> Տե՛ս Թ. Ղարազյուլյան, նշվ. աշխ., էջեր 88, 89: Ա. Մուքիասյան, նշվ. աշխ., էջ 58-59:

<sup>12</sup> Տե՛ս Թ. Ղարազյուլյան, նշվ. աշխ., էջ 117:

այլ՝ օվկի՛անոս, միլի՛ոն, օրի՛որդ, Մարի՛ամ, հեքի՛աթ, փասի՛ան, պի՛ոներ, ակադեմի՛ա, հրե՛ա, Անդրե՛աս, քրիստոնե՛ական, այսինքն՝ այնպես, ինչպես որ ունենք կենդանի լեզվի արտասանական պատկերում:

### Բաղաձայնների արտասանությունը

Չզալի տեղաշարժեր կան **բ, գ, դ, ձ, ջ** ձայնեղ պայթական բաղաձայնների արտասանության մեջ բառամիջում և բառավերջում: Չայնեղ խուլ կամ խուլ ձայնեղ տեղաշարժերը բնորոշ են եղել նոր գրական հայերենին նրա զարգացման տարբեր փուլերում: Այդ մասին հայ լեզվաբանության մեջ վեճ չկա: Տարակարծություններ կան այդ տեղաշարժերի այսպես կոչված ուղղությունների վերաբերյալ: Արտահայտվել է հիմնականում երկու կարծիք:

Առաջին տեսակետի կողմնակիցները, վերլուծելով 50-60, մասամբ նաև 70-ականներին մեր լեզվում առկա բաղաձայնական տեղաշարժերը, արձանագրում են գրային արտասանության, այսինքն՝ խուլերի ձայնեղ արտասանության ակնհայտ զարգացում: Այս տեսակետը փորձարարական զանազան արդյունքներով հաստատում են Վ. Առաքելյանը, Ա. Ղարիբջյանը, Է. Աղայանը, Թ. Ղարազյուլյանը և ուրիշներ: Չարգացման այս միտումն են արձանագրում նաև 1973-ին Հ. Բարսեղյանի հրատարակած ուղղագրական բառարանը և դրան հաջորդած՝ տերմինաբանական կոմիտեի որոշումը, ըստ որի՝ երկակի արտասանություն ունեցող բառերում մախապատվությունը պետք է տալ գրային արտասանությանը, այն տրամաբանությամբ, որ արտասանական ընդհանուր զարգացման միտումը այդ ուղղվածությունն ունի:

Այս տեսակետը, ինչպես ասվեց, իր կատարած հարցումների արդյունքում պաշտպանել է նաև Էդ. Աղայանը: Ճշտելու համար ձայնեղ բաղաձայնների արտասանության մեջ 60-ականներին կենդանի խոսքում նկատվող տեղաշարժերը՝ մա հարցում է անցկացրել տարբեր սերունդների պատկանող մարդկանց շրջանում՝ 20 բառի արտասանության հիմքով: Ըստ ստացված արդյունքների՝ ավագագույն սերնդի մեջ (1890-1900թթ. ծնվածներ) բացարձակորեն գերակշռող է շնչեղացված խուլ արտասանությունը, իսկ կրտսերագույն սերնդի մեջ (1941-1950թթ. ծնվածներ) գերիշխող է ձայնեղ արտասանությունը: Բերված փաստերը և ընդհանուր եզրակացությունը ինքնին համոզիչ են: Սակայն ցանկանալով առավելագույնս ընդգծել բաղաձայնական համակարգում օբյեկտիվորեն առկա «զզալի փոփոխությունները», այսինքն՝ ունենալով կանխակալ դիրքորոշում՝ առանձին բառերի արտասանության վերաբերյալ լեզվաբանը այդ տախտակում ներկայացնում է հարցման այնպիսի արդյունքներ, որոնք, մեղմ ասած, չեն կարող նկատվել վավերական: Այսպես՝ ըստ հարցման արդյունքների՝ առաջարկվող բառերից, օրինակ, **ընդամենը, կարագ, որջ** բառերը կրտսերագույն սերնդից հարցման ենթարկվածների (որոնք համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողներ կամ շրջամավարտներ են) մոտ 95 տոկոսը՝ 50-ից 47-ը, իբր արտասանում են գրային հնչյունով՝ **կարագ, ընդամենը, որջ**, իսկ **ներբող, նրբանցք, քագուհի** բառերը իբր գրային արտասանությամբ են հնչեցնում բոլոր 50 հարցվողները, **մեջ** բառը ավագագույն սերունդը առանց բացառության արտասանում է **մեջ**, իսկ կրտսերագույն սերնդից 50-ից 34-ը իբր արտասանում է **մեջ**<sup>13</sup>:

Սրանք առավել անհամոզիչ են թվում, երբ ծանոթանում ենք նույն ժամանակ և նույն բառերի վերաբերյալ մեկ այլ լեզվաբանի հարցման արդյունքներին, որի

<sup>13</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջեր 24-27:

խարանը դարձյալ պետհամալսարանի նույն ֆակուլտետի ուսանողներ են՝ ծնված 1955-1957թթ.: Ըստ այդ տվյալների՝ 50 ուսանողներից 50-ն էլ ընդամենը, կարագ, մեջ բառերը առանց բացառության արտասանում են խլացված՝ ընծա-մենը, կարաՔ, մեՉ, իսկ թագուհի բառը թաՔուհի են արտասանում 47-ը, թագու-հի՝ ընդամենը 3-ը<sup>14</sup>:

Վերջին հարցման հեղինակ Մանվել Ասատրյանը փորձում է իր կատարած հարցումների և դիտարկումների արդյունքում զարգացնել մեկ այլ տեսակետ՝ տարբեր լեզվաբանության մեջ իշխող կարծիքից: Ըստ նրա՝ կանխակալ դիրքո-րոշումը խանգարում է լեզվաբաններին օբյեկտիվորեն կողմնորոշվելու կենդանի լեզվում պայթակալան ձայնեղների ճիշտ արտասանության մեջ: Նա այն համո-զումն ունի, որ բաղաձայնների արտասանության մեջ պայթակալան բաղաձայննե-րի զարգացումը միակ ուղղությունը չէ, և որ «ձայնեղների շնչեղ խլացման երևույ-թը լեզվի արդի փուլում չի կարելի համարվել մեռած պատմական օրինաչափու-թյուն»<sup>15</sup>: Ավելին, գրական մի խումբ բառերի արտասանության մեջ լեզվաբանը արձանագրում է ձայնեղ պայթակալանների խլացման հակառակ շարժում. իբր այդ միտումը հստակ կարելի է տեսնել ոչ միայն բառապաշարի ժողովրդախոսակցա-կան, այլև զգալի չափով նաև գրքային-գրական բառաշերտի վրա: Որպես օրի-նակ բերվում են գրական մի շարք բառեր՝ միրգ, մրգավաճառ, մահարձան, ձեր-բակալել, երջանիկ, երիտասարդ, նորոգել, վարագույր, նուրբ, արդարև, նվագ, ծագել, նավասարդ, կախարդ, արձան, արձանագրել, առանձին, միջազգային, մի-ջուկային, մակարդակ, հորդորել, հագուրդ և այլն: Լեզվաբանը օրինաչափ է հա-մարում դրանց մեծ մասի հենց շնչեղ խուլ արտասանությունը՝ միրՔ, արՅան, հորՔորել, մակարՔակ և այլն:

Եղած տարակարծությունների պատճառները տարբեր են՝ որոշ լեզվաբաննե-րի կանխակալ դիրքորոշումը, «աուրյեկտիվ ցանկությունը», արևմտահայերենի ո-րոշակի ազդեցությունը, գրական լեզվի բառապաշարից կենդանի խոսակցական լեզվին անցած և գործածական դարձած առանձին բառերի, օրինակ՝ նրբանցք, ներքողել, հանդերձ, վրձին, վարձու, տնամերձ և այլն, արտասանական յուրահատ-կությունները և այլն: Դրանցից յուրաքանչյուրը առանձին քննարկման նյութ է:

Այս բոլորով հանդերձ՝ անվերապահորեն կարելի է պնդել, որ այսօր արևելա-հայ գրական լեզվի ձայնեղ պայթակալանների արտասանության մեջ իշխող միտու-մը մնում է խուլ-ձայնեղ տեղաշարժը: Չայնեղ պայթակալան բաղաձայնների ար-տասանական համակարգում արձանագրվող մյուս տեղաշարժը (ձայնեղ-խուլ զարգացումը), այսինքն՝ գրական-գրքային արտասանության հակադիր միտումը, որ նկատում է Մ. Ասատրյանը, ունի մասնակի դրսևորումներ և անցման շրջանի երևույթ է: Դա հատուկ է միայն գրական-գրքային բառապաշարից ժողովրդա-կան-խոսակցական լեզվին անցած բառերի մի որոշակի խմբի, որոնք ժամանակի ընթացքում դարձյալ հետընթաց շարժմամբ ձեռք են բերում գրային արտասանու-թյան հատկանիշներ:

Այսպես՝ ետգրաբարյան շրջանում ձայնեղ պայթակալանների զարգացումը բառամիջում և բառավերջում **բ, ռ**, երբեմն նաև **ճ**, մ ձայնորդներից և ձայնավոր-ներից հետո ընթացել է այն ուղղությամբ, որ արևելահայ գրեթե բոլոր բարբառնե-րում նրանք վերածվել են շնչեղ խուլերի: Այսինքն՝ աշխարհաբարի սկզբնական շրջանում, երբ ժողովրդախոսակցական լեզվի հիմքի վրա ձևավորվում էր նոր գրական լեզուն, գերիշխող է եղել ձայնեղների խուլ արտասանությունը: Գրական լեզվի մշակմանը զուգընթաց՝ տեղի է ունենում հետընթաց շարժում. բառամիջի և

<sup>14</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, Արևելահայ գրական լեզվի ձայնեղ պայթակալան բաղաձայննե-րի արտասանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, թիվ 2, էջ 34-35:

<sup>15</sup> Նույն տեղում:



բառավերջի որոշակի դիրքերում խուլերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են ձայնեղներին: Այդ հետընթաց շարժման մեջ ամենակարևոր գործոն են հանդիսացել գրավոր լեզուն և ավանդական ուղղագրությունը: XX դարի կեսերից գրքի և գրավոր խոսքի միջոցով լեզվի ուսուցումը հիմնավոր պատճառներ են դառնում գրային արտասանության տարածման: Դրանց ազդեցությունը արտասանության վրա անչափ մեծ է նաև այսօր: Այս տրամաբանությամբ խուլերից ձայնեղ արտասանական յուրաքանչյուր տեղաշարժ դիտվում է օրինակաչափ ու համոզիչ:

Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ մի խումբ բառերում **բ, գ, դ, ձ, ջ** ձայնեղ պայթական բաղաձայնների համար կանոնական էր շնչեղ արտասանությունը: Այդ են վկայում մի շարք լեզվական փաստեր: Նույն 50-60-ականների հայոց լեզվի դասագրքերում ձայնեղների խլացված արտասանությունը արձանագրվում է որպես կանոն: Օրինակ՝ Ա. Ղարիբյանի՝ 1957-ին հրատարակված «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց»-ում ուղղախոսական նորմատիվ ձևեր են համարվել **ար-Քելք, ծա-Քել, մե-Ք** (մեզ), **աճուրճ, խարճախ, խարճավանք, հարճ** (հարդ), **հորճ** (հորդ) և էլի բազմաթիվ մման բառեր<sup>16</sup>:

Դրանից ընդամենը մեկ տարի առաջ՝ 1956-ին հրատարակված «Դպրոցական ուղղագրական բառարանը» որպես կանոնական արտասանության օրինակներ է տալիս այնպիսի ձևեր, որոնք ոչ միայն այսօր գոյություն չունեն, այլև անհավանական է, որ կանոնական արտասանական ձևեր համարված լինեին նույնիսկ բառարանի ստեղծման ժամանակ՝ 50-ականներին: Ըստ վերոհիշյալ ուղղագրական բառարանի տվյալների՝ ճիշտ են և ընդունված հետևյալ արտասանությունները՝ **ա-Քարակ, աճամ, աճամանդ, արա-Քընթաց, անար-Քել, քա-Ք, ճա-Քար, ճառա-Քայք, սարճ, մո-Ք, Վարա-Ք** և էլի այդպիսի մի քանի տասնյակ բառեր<sup>17</sup>: Անկասկած է, որ դրանց մեծ մասը լեզվաբանի սուբյեկտիվ մոտեցման և անհատական արտասանական շեղումների արդյունք է: Բայց դժվար է միանշանակ պնդել, որ դրանց մյուս մասը, այնուամենայնիվ, չի ձևավորվել ժամանակի կենդանի լեզվի արտասանական կանոններին համապատասխան, եթե նկատի ունենանք, որ աշխարհաբարի բաղաձայնական համակարգը, ինչպես նշվեց, սկզբնապես ձևավորվում էր բարբառների ուժեղ ազդեցությամբ:

Ավելի ուշ՝ 70-ականներին գրված աշխատանքներում, հավանաբար ելնելով ժամանակի արտասանական նորմերից, կանոնական են համարվել արտասանական այնպիսի ձևեր, որոնք այսօր մեր դիտարկումներով հստակ անցել են գրային արտասանության, ինչպես բառամիջում և բառավերջում ձայնավորներից և յ ձայնորդից հետո մի քանի բառերում **գ-ի ք** արտասանությունը՝ **ծա-Քել, արևածա-Ք, միանվա-Ք, նվա-Ք**<sup>18</sup>:

Մ. Ասատրյանը, ապացուցելու համար, որ արևելահայ գրական լեզվում ձայնեղ պայթականների՝ որոշակի դիրքերում դրսևորվող շնչեղ խլացումը, այնուամենայնիվ, «այս կամ այն չափով կենդանի ու գործուն է նաև լեզվի արդի փուլում», որպես արտասանական գրական նորմ է ներկայացնում ձայնեղների խուլ արտասանության հետևյալ պատկերը՝ **նվագ-նվա-Ք, հորդորել-հորճորել, մակարդակ-մակարճակ, հագուրդ-հա-Քուրճ, մարգագետին-մար-Քագետին, կախարդական-կախարճական, արեզակ-արե-Քակ, երիտասարդական-երիտասարճական, առանձին-առանՑին** և այլն: Անցել է շուրջ երեք տասնամյակ: Այդ բառերի

<sup>16</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Եր., 1957, էջ 14-15:

<sup>17</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Եր., 1956:

<sup>18</sup> Տե՛ս Թ. Ղարազուլյան, նշվ. աշխ., էջ 188:

արտասանության մեջ ակնհայտորեն գերիշխող կամ արտասանական միակ ձև է դարձել գրային՝ ձայնեղացված արտասանությունը: Եվ լեզվաբանի այն պնդումը, թե նշված բառերում առկա է կամ գերիշխում է ձայնեղների խուլ արտասանությունը, կամ իբր չկա շնչեղ խուլների հետադարձ շարժում դեպի ձայնեղները, ըստ էության, ժամանակի մեջ և, իհարկե, նաև վիճակագրական ուսումնասիրությունների տվյալներով այսօր չի հաստատվում:

Այսպես՝ մեր հարցման արդյունքներով, որին մասնակցել են բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսի 35 ուսանողներ, երիտասարդական, կախարդական, առանձին, հագուրդ բառերը գրությամբ, այսինքն՝ համապատասխանաբար **դ, ձ, գ** պայթական ձայնեղներով են արտասանել բոլոր 35-ն էլ, իսկ մակարդակ բառը **թ**-ով է արտասանել ընդամենը մեկ ուսանող, որ հավանաբար պետք է դիտել արտասանական անհատական շեղման արդյունք:

Հարցման ենթարկված 15 ուսուցիչներից և ոչ մեկը նշված բառերը չի արտասանել խլացված տարբերակով՝ մակարԹակ, երիտասարԹ, կախարԹ, հագուրԹ: Սա նշանակում է, որ նույնիսկ համեմատաբար ավագ սերնդի մոտ նշված բառերում ձայնեղների խուլ արտասանությունը չի գործում և ժամանակավրեպ երևույթ է ժամանակակից գրական հայերենում:

Մեր օրերում նորմատիվ քերականության որոշ ձեռնարկներում նույնպես կարելի է հանդիպել նշված ձայնեղների խուլ արտասանության հանձնարարելի ձևերի այնպիսի բառերում ու կազմություններում, որոնք վաղուց վերստացել են իրենց՝ ըստ գրության արտասանությունը: Օրինակ՝ համոզիչ չէ դպրոցական դասագրքերում որպես արդի ուղղախոսության անվերապահ նորմ ներկայացնել ձայնեղ պայթական **գ**-ի շնչեղ խուլ **ք** հնչյունը հետևյալ բառերում՝ **ծեՔ, ծեՔին** (առավուտ **ծեՔին**), **ծաՔել, արևածաՔ, ծաՔում**<sup>19</sup>: Կամ՝ նույնքան համոզիչ չէ երկակի արտասանություն ունեցող **խորանարդ, խորհուրդ, մնացորդ** բառերի շարքում նշել նաև **թակարդ** (թակարԹ), **կախարդ** (կախարԹ) բառերը:

Լեզվական կանոնով երկակի արտասանություն է վերագրվում նաև **հաջող** (հաՉող), **հաջողակ** (հաՉողակ), **հաջողություն** (հաՉողություն) բառերին<sup>20</sup>: Մինչդեռ դրանք այսօր հստակ հնչվում են ձայնեղ արտասանությամբ:

Փոքր-ինչ դժվար է, իհարկե, արտասանական երկվություն ունեցող բառերի խնդիրը: Նորմավորման ժամանակ երբեմն հեշտ չի լինում ճշգրտորեն որոշել այն բառերի սահմանները, որոնք պետք է հնչվեն ավանդական շնչեղ խուլ արտասանությամբ, և նրանց, որոնք պետք է հնչվեն ըստ գրության:

Պայթական ձայնեղ բաղաձայններով բառերի մի մասի արտասանությունը ներկայումս տատանվում է և արտասանական տատանումներն ու երկվությունները դժվարացնում են ուղղախոսական նորմերի որոշումը: Այս դեպքում ինքնաբերաբար գործում են արտասանական ազատ տարբերակները: Ինչպես՝ **թաԳուհի // թաՔուհի, մերՉավոր // մերՑավոր, թաԳավոր // թաՔավոր, արՉան // արՑան, բացարՉակ // բացարՑակ, արՉանագրություն // արՑանագրություն, հուշարՉան // հուշարՑան, օՉիք // օՑիք, ՆախիՉևան // ՆախիՑևան, ԹաԿևոս // ԹաՔևոս, կամ՝ մեջ արմատից կազմված մի շարք բառեր՝ միՉանցք // միՑանցք, միՉոց // միՑոց, միՉագգային // միՑագգային և այլն:**

Դեռևս մեկուկես տասնամյակ առաջ տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումը, կարծում ենք, այդ հարցին հիմնականում լուծում տալիս է՝

<sup>19</sup> Տե՛ս Է. Աղայան, Հ. Բարսեղյան, նշված դասագիրքը, էջ 98:

<sup>20</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 64: Ուշագրավ է, որ հայոց լեզվի դպրոցական դասագրքում (««Հայոց լեզու», Եր., 1991) **թակարդ** և **հաջող** (նաև **աճուրդ, մակարդակ**) բառերի համար արտասանական ճիշտ տարբերակներ են նշվել գրային արտասանությամբ ձևերը (էջեր 102, 109), մի հանգամանք, որ հետագա ուսումնասիրողները ամոտեսել են:

երկակի արտասանության դեպքում նախապատվությունը տալ գրային արտասանությանը<sup>21</sup>: Լեզվի արտասանական նորմերի զարգացումը և ուղղախոսության ընթացքը անվերապահորեն հաստատում են այս միտումը:

Մեր հարցման արդյունքներով, օրինակ, **հուշարձան** և **նվագել** բառերը 15 ուսուցիչներից 13-ը, իսկ ուսանողներից բոլոր 15-ն էլ հնչեցնում են գրային արտասանությամբ՝ **նվագել**, **հուշարձան**: Կամ՝ **միջոց**, **միջանցք**, **զոգավորություն**, **արձան** և նշված մյուս բառերի գրային արտասանությանը նախապատվություն է տվել հարցվածների 80-85 տոկոսը: Ըստ որում, երիտասարդ սերնդի արտասանական զուգահեռներում բացառապես գերիշխում է գրային արտասանությունը: Օրինակ՝ **միջազգային** բառը ըստ գրության են հնչեցնում 15 ուսուցիչներից 7-ը, քայց նույնքան ուսանողներից՝ 11-ը:

Կարծում ենք, արտասանության միօրինակացումը այսօր արդեն իսկ պահանջում է նշված բառերի հնչման մեջ կանոնական համարել դրանց գրային տարբերակները՝ **հուշարձան**, **նվագել**, **միջոց**, **ԹԳԼևոս**, **արձանագրություն**, **միջազգային** և այլն, իսկ դրանց շնչեղ խուլ արտասանությունը համարել հնացած և ոչ հանձնարարելի:

Այդ տեսակետից ձայնեղ պայթյականների արտասանության պատկերը ժամանակի գրական լեզվում ընդհանուր առմամբ ճիշտ է արտացոլում Հ. Բարսեղյանի ուղղախոսական բառարանը: Տակավին երեք տասնամյակ առաջ ստեղծված այդ բառարանում կանոնական են համարվում այնպիսի բառերի գրային արտասանության տարբերակներ, որոնց տարածումը այսօր մեծ չափով կնպաստեր այդ ոլորտում ուղղախոսության նորմերի միօրինակացմանը: Այդ բառերից են՝ **Միջագետք**, **միջադեպ**, **միջազգային**, **միջանցիկ**, **մակարդակ**, **հորդորել**, **հագուրդ**, **երիտասարդ**, **նվագ**, **արձան**, **արձանագրություն**, **առանձին**, **վրձին**, **տնամերձ**, **ուղերձ**, **ընդմիջել**, **աջակցել**, **զուգահեռ**, **արբենալ**, **ձերբակալել**, **աբեցում** և այլն<sup>22</sup>:

Արտասանական նորմերի հաստատման առումով շատ բնորոշ է նաև, որ հայոց լեզվի դպրոցական դասագիրքը էջ(ք) և մեջ արմատով բաղադրված մի շարք բառերի համար արտասանական կանոնական և միակ ճիշտ ձև է սահմանում դրանց գրային տարբերակները, ինչպես՝ **իջնել**, **իջեցում**, **միջակ**, **միջև**, **միջին**, **միջատ**, ինչպես նաև հոլովական ոչ վերջավորությամբ՝ **քրոջ**, **ընկերոջ** բառերը:

## **Շեշտադրություն**

Շեշտադրությունը բանավոր խոսքի կառուցման կարևոր գործոններից է:

Օտար կամ փոխառյալ բառերի շեշտադրության գործող կանոնը, որ հաստատվել է տերմինաբանական կոմիտեի կողմից և ամրագրված է մասնագիտական գրականության մեջ, հետևյալն է՝ մերժել նախավանկ շեշտի պահպանումը հայերենում և այդ շեշտի գործածությունը թույլատրելի համարել միայն ուղիղ ձևերում, այն էլ բացառիկ դեպքերում, և ապա՝ «թեքված ձևերում փոխառյալ բառերը անհրաժեշտաբար վերստանում են հայերենի վերջադիր շեշտը»<sup>23</sup>: Կանոնը, անշուշտ, գործում է հին և հնագույն փոխառություններում, որոնք այսօր մեծ մասամբ չեն գիտակցվում որպես փոխառություններ: Մինչդեռ փոխառությունների և օտար անունների մի մեծ խմբի համար, ըստ մեր ձայնագրական և լսողական փորձի, կանոնը գրեթե չի գործում. թեքված ձևերում այդ բառերը հակված են պահպանելու բնագրային՝ փոխատու լեզվի շեշտադրությունը: Հարցմանը

<sup>21</sup> Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988, էջեր 298-306:

<sup>22</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական, ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., 1973:

<sup>23</sup> Թ. Ղարապոլյան, նշվ. աշխ., էջեր 222-223:

մասնակցած և գրական լեզվին բավարար չափով տիրապետող և՛ ավագ, և՛ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների մեծագույն մասը, մոտ տասը մեկի կամ երկուսի հարաբերությամբ պահպանում է բնագրի շեշտադրությունը: Կենդանի խոսքում հայերենի արտասանական նշված կանոնը ըստ էության չի գործում: Հատուկ ջանք պետք է գործադրել՝ հետևյալ բառերը պահանջվող շեշտադրությամբ արտասանելու համար՝ **Ֆրանսիայի՛, Իտալիայո՛վ, ռադիոյի՛, Լեոնոտովի՛, Պուշկինի՛ց, Պուտինի՛ն, Դոստոևսկու՛** և այլն: Դժվար է հայերենի շեշտադրության կանոնով արտասանել այդ բառաձևերը խոսքաշարում, մանավանդ, երբ դրանք հաջորդում են միմյանց, ինչպես՝ «**Լեոնոտովի՛, Պուշկինի՛, Դոստոևսկու՛** ստեղծագործությունները ոուսական ոգու գեղարվեստական խտացումներ են»:

Կանոնի և զարգացման տեսակետից արտասանական տեղաշարժեր կան նաև այլ իրողություններում, ինչպես՝ **և-ի** արտասանական տարբերակները բառամիջում և բառավերջում՝ **թեր[՛]վյա // թեր[վ]յա, այլ[՛]վյ // այլ[վ]յ, ինչ[՛]վյե // ինչ[վ]յե**, կրկնակ բաղաձայնների արտասանությունը հայերեն և փոխառյալ բառերում՝ **դուար // դուար, Դիկկենս // Դիկենս, պտտել // պտտրտել, բջջային // բջջջային // բլբլբլային**, գաղտնավանկ ը-ի արտասանությունը՝ **զըննել // զընընել, կըրկնել // կըրկընել, ձեռընտու // ձեռընտու, բըռնկվել // բըռընկվել**, օտար բառերի տառադարձությունը, բաղաձայնների զուգորդումը բառամիջում և այլն, և այլն: Մրանք հարցեր են, որ առանձին և հանգամանակից ուսումնասիրության կարիք ունեն:

Մեր մոտեցումը հետևյալն է.

Վերը քննարկված արտասանական բոլոր իրողություններում առկա է զարգացման մեկ հիմնական միտում. գրական լեզվում **տարածվում և ընդհանրական է դառնում գրային արտասանությունը**: Այդ ուղղությունը ժամանակակից հայերենի ուղղախոսության բնական ճանապարհն է:

Լեզվական նորը վիճակագրական միջին չէ: Բայց վիճակագրությունը կարող է դառնալ նորմավորման գործընթացի կարևորագույն գործոն ու չափանիշ, եթե դրա արդյունքները համապատասխանում են լեզվի պատմականորեն ձևավորվող սկզբունքներին, ներդաշնակում են լեզվի կանոնին ու ոգուն: Վիճակագրական հաշվումներ կարելի է կատարել նաև բառապաշարային, բառակազմական, իմաստաբանական և քերականական երևույթների համար:

Ուղղախոսության և առհասարակ լեզվի զարգացման նորմերը մշակելիս պետք է առավել չափով հաշվի առնել ընդհանուր խոսակցական լեզվում լայն տարածում գտած այն փաստերը, որոնք համընկնում են գրական լեզվի մշակման օրինաչափություններին և չխուսափել դրանք ամրացնելուց լեզվի նկարագրությանը նվիրված ձեռնարկներում:

**Ю. С. АВЕТИСЯН - Произносительные сдвиги в орфоэпии современного армянского языка.** - Анализируя произносительные сдвиги в гласных и смычных согласных современного армянского языка, автор приходит к заключению, что в литературном языке распространяется и становится общеупотребительным побуквенное произношение. Исходя из этого, при выработке норм орфоэпии и развития языка в целом надо больше учитывать распространенные в разговорном языке факты, совпадающие с закономерностями обработки литературного языка, и не избегать их фиксирования в соответствующих пособиях.